

ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
31.08.2021-30.09.2021

Ներածություն

Գիտության ու տեխնիկայի սրընթաց զարգացումը, համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը բնականաբար իրենց արտացոլումն են գտնում լեզվում: Լեզուն շարունակ հարստանում է նոր բառերով, որոնք դառնում են նոր իրողությունների, հասկացությունների, հարաբերությունների, առարկաների առկայությունը արձանագրող միջոցներ: Հետևում է, որ որևէ ոլորտին առնչվող բառապաշարի, մասնավորապես՝ տերմինային համակարգի հետազոտությունը վերաբերում է ոչ միայն լեզվական, այլ նաև տվյալ ոլորտի իրողություններին:

Համաշխարհային տնտեսության վերընթաց զարգացումը և դրան ուղեկցող բառաստեղծման բուռն գործընթացը հայ իրականության մեջ իրենց արտացոլումներն ունեցան հատկապես տնտեսակարգի փոփոխությունից և անկախության ձեռքբերումից հետո: Տնտեսական հարաբերությունների ազատականացումը, նոր տնտեսական հարաբերությունների և տնտեսվարման նոր համակարգի ձևավորումը, աշխարհի զարգացած տնտեսահամակարգերի հետ ազատ շփումն ու գործակցությունը անհրաժեշտաբար սկիզբ դրեցին համաշխարհային տնտեսության հետ հայաստանյան իրողությունների համապատասխանեցման գործընթացի, նորովի իր աշխատանքները ծավալեց նաև հայ տնտեսագիտական միտքը¹, միաժամանակ հայերենի բառապաշարում ի հայտ եկան տնտեսությանը վերաբերող բազում նոր անվանումներ, տերմիններ: Հասկանալի է՝ տնտեսական ոլորտի տեղաշարժերը մեծապես նպաստում են լեզվի բառապաշարի համալրմանը, բայց և բառապաշարի նոր իրողությունները անհրաժեշտ ու կարևոր միջոց են տնտեսագիտական հետազոտությունների, մշակումների և ծրագրերի իրականացման համար:

¹ Տե՛ս Տնտեսագիտության տեսություն (ուս. ձեռնարկ), խմբ.՝ Գ.Կիրակոսյանի, Ի.Խլղաթյանի, Ե., «Տնտեսագետ», 2009, 752 էջ. Ավետիսյան Ս., Թովմասյան Ռ., Տնտեսագիտության տեսություն, Ե., «Նահապետ», 2010, 324 էջ. Խաչատրյան Գ., Տնտեսագիտության տեսություն (ուս. ձեռնարկ), Ե., հեղ. հրատ., 2007, 631 էջ. Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Ե., «Տիգրան Մեծ», 2006, 460 էջ:

Հայ իրականության մեջ տնտեսության վերափոխման գործընթացները վերաբերում են 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին, և պատահական չէ, որ այս շրջանում հրապարակ են իջնում ընդհանուր և մասնագիտական բնույթի բառարաններ, որոնք տնտեսագիտական ոլորտի բառապաշարով ներկայացնում են նաև տնտեսության ու տնտեսագիտության մեջ տեղի ունեցած տեղաշարժերն ու առկա վիճակը: Իհարկե, ավելի վաղ ևս հրապարակվել են նմանատիպ բառարաններ¹, անդրադարձ է եղել ժամանակակից տնտեսագիտական տերմինաբանության վրա ազդող գործոններին², սակայն հայերենի տնտեսագիտության տերմինաբանությունը, որքան մեզ հայտնի է, հանգամանալի լեզվաբանական վերլուծության չի ենթարկվել: Այս աշխատանքում մեր նպատակն է՝ դիտարկել տնտեսությանն ու տնտեսագիտությանը վերաբերող տերմինաբանության յուրահատկությունները³, նորակազմ տերմինների քննությամբ⁴ երևան հանել ոլորտի զարգացման հիմնական միտումները, ինչպես նաև արձանագրել նորակազմությունների լեզվական առանձնահատկությունները:

Մի քանի դիտարկում տնտեսագիտության տերմինաբանության վերաբերյալ

Տնտեսագիտական տերմինաբանությունը աչքի է ընկնում լայնածավալ ընդգրկմամբ, բառաշերտերի բազմազանությամբ, փոփոխությունների ու տեղաշարժերի մեծ արագությամբ: Կարելի է տնտեսությանն ու տնտեսագիտությանը վերաբերող բառապաշարում պայմանականորեն առանձնացնել մասնագիտական, տնտեսագիտության տարբեր ոլորտներն ընդգրկող տերմինային բառապաշար և տնտեսագիտության անվանակարգը ներկայացնող բառաշերտ: Իհարկե, տնտեսագիտության ոլորտում մեծ գործածականություն ունեն նաև տնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող բառերը, որոնք սովորաբար համագործածական բնույթ ունեն և հասկանալի ու կիրառելի են շատերի համար:

¹ Ավդալբեկյան Թ., Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Ե., «Հայաստան», 1964, 586 էջ:

² St'e Apyтyян III., Aкoпян Л., Факторы, влияющие на формирование современной экономической терминологии, Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով, Ե., «Տնտեսագետ», 2018, էջ 508-512:

³ Դիտարկումները կատարում ենք Գ. Կիրակոսյանի, Հ. Ղուշյանի, Ի. Տիգրանյանի «Տնտեսագիտական բացատրական բառարան» (Ե., «Տնտեսագետ», 1999, 494 էջ) և Ա. Բայադյանի «Տնտեսագիտական բառարան» (Ե., «Գիտություն», 2014, 528 էջ) աշխատությունների ընձեռած նյութի շրջանակներում:

⁴ Նյութը քաղել ենք Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարան (3000 բառ)» (Ե., «Փյունիկ», 1996, 208 էջ), Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան» (Ե., «Նաիրի», 2002, 492 էջ) աշխատանքներից, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր» շարքի Ա,Բ,Գ,Դ պրակներից (Ա պրակ, Ե., «Գիտություն», 2015, 196 էջ, Բ պրակ, Ե., «Ասողիկ», 2016, 184 էջ, Գ պրակ, Ե., «Ասողիկ», 2017, 143 էջ, Դ պրակ, Ե., «Ասողիկ», 2018, 132 էջ):

Մասնագիտական կամ տնտեսագիտական տերմինները հասկացությունների անվանումներ են, որոնք սովորաբար գործածվում են գիտական հետազոտություններում, տնտեսական գործունեության գիտական վերլուծություններում, կառավարման համակարգում, տնտեսական ցուցանիշների գնահատումներում, ֆինանսավարկային, հաշվապահական, հարկային, առևտրային և այլ գործողություններում: Նկատելի է, որ սրանցում մեծ թիվ են կազմում կայուն բառակապակցությունները (*արդյունավետ շուկաների տեսություն, արտադրության ծախսերի ընդհանուր ինդեքս, բազմակի կոռելյացիայի գործակից, բացարձակ հավելած, Գրեշհեմի օրենք, զույգային ռեգրեսիա, լներիջի գործակիցներ, Կոուսի թեորեմ, համախառն ավելացված արժեք, Հերֆինդալի ինդեքս* և այլն): Այս բառաշերտում կարելի է առանձնացնել տերմինաբանական մանրահամակարգեր, որոնք խմբավորում են տերմիններ ըստ ֆինանսական, բանկային ու առևտրային գործունեության տեսակների (*հաշվապահական հաշվառում, աժուր, ալիենացիա, ակվիզիցիա, ակտիվների կոնվերսիա, գործառնական գործունեություն, հարկում, ենթավարձակալություն*), միջոցների ու գործիքակազմի (*ալոնժ, արտոնագիր, բաժնեթուղթ, ոչ նյութական ակտիվներ, անժամկետ արտոնյալ բաժնետոմս, անուտետ, առաջարկի գրաֆիկ, բանկային ավանդ, ավելցուկային պահուստներ, դեբետային քարտ, ինժինիրինգ*), կարգավորումների (*աճուրդի կանոններ, առևտրական դատարան, ավտոմատ կայունարարներ, արգելիչ կարգադրություն, արտաքին առևտրի կարգավորում, արտոնագրային օրենքներ, գների պետական կարգավորում, ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման կառավարում*), գործընթացների (*ազգայնացում, աշխատուժի միգրացիա, արժույթային դեմպինգ, արժույթային կուրսի իջեցում, արտադրության ինֆլյացիոն անկում, լճացում*) և այլն: Վերջին հաշվով, սրանք ընդհանուր բնույթի և ողջ տնտեսական համակարգին վերաբերող տերմիններ են, որ առնչվում են տնտեսական քաղաքականությանը, ֆինանսավարկային ու հարկային համակարգերին, հաշվապահական հաշվառմանը, առևտրային գործարքներին, տնտեսագիտական հիմնական ուսմունքներին և այլն¹: Նկատենք, որ այս կարգի միավորները սովորաբար լայն հանրությանը հասկանալի չեն և ըստ անհրաժեշտության՝ կարիք ունեն բացատրության, սակայն որոշ դեպքերում տերմինները ոչ միայն հասկանալի են, այլ նաև, կարելի է ասել, դարձել են համագործածական բառեր, որովհետև դրանցով անվանվող իրողությունները լայն տարածում ունեն հասարակության մեջ: Նման միավորներից են՝ *աշխատուժ, աճուրդ, գրավ, սպառողական վարկ,*

¹ Sté u նաև Бернар и Колли, Толковый экономический и финансовый словарь (французская, русская, английская, немецкая, испанская терминология), т. 1, М., "Международные отношения", 1997, с. 5, Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ. Գ. Կիրակոսյանի, Ի. Խլդարյանի, Ե., «Տնտեսագետ», 2009, էջ 36-37, A. Zatikyan, Economics in English, Yerevan State University Press, 2007, p. 4:

ներդրում, արտահանում, մաքսատուրք, եկամտահարկ, մեծածախ առևտուր, բանկային քարտ, անշարժ գույք և այլն: Հաճախ էլ համագործածական բառերն ու արտահայտություններն են դառնում տնտեսագիտության տերմիններ, ինչպես՝ *առաքում, բարոյական ներգործություն, բացարձակ առավելություն, գաղտնի համաձայնություն, եկամուտ, ընդարձակում, լճացում, լուռ համաձայնություն, ճգնաժամ*¹ և այլն:

Բավականին ընդգրկուն է տնտեսագիտական տերմինաբանության անվանակարգը: Այս շերտը կազմում են տնտեսական գործառույթ ունեցող առանձին հաստատությունների անվանումները (*Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ասիական դոլարների շուկա, Ավանդների ապահովագրության ֆեդերալ միություն, Արաբական արժույթային հիմնադրամ, Եվրոպական արժույթային համակարգ* և այլն), տնտեսական հաստատությունների տեսակների անվանումները (*առևտրական ներկայացուցչություն, առևտրի պալատ, ավանդային կազմակերպություն, արժեթղթեր թողարկող հաստատություն* և այլն), տնտեսական գործունեության որևէ իրողության տեսակների անվանումները (օրինակ՝ *ակտիվների շրջանառության վարկ, առանց հետևանքի վարկ, առևտրային վարկ, անձնական վարկ, անուղղակի վարկ, երաշխիքային վարկ, հիփոթեկային վարկ, հոժարագրային վարկ* և այլն), տնտեսական հարաբերությունների մասնակիցների անվանումները (*ավանդատեր, արխիվարիուս, բաժնետեր, բրոկեր, գանձապետ, հարկաբյուջետային գործակալ, գործարար, դիլեր, ձեռնարկատեր, մագնատ, սպառող* և այլն) և այս կարգի բազում անվանումներ: Նկատելի է, որ տնտեսագիտության անվանակարգում ևս գերակշռում են կայուն բառակապակցությունները, հատկապես՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կաղապարներով:

Տնտեսագիտության տերմինահամակարգին են վերաբերում նաև տնտեսության օբյեկտների և սուբյեկտների, ճյուղային կամ ոլորտային իրողությունների, հարաբերությունների, գործողությունների անվանումները: Նկատի ունենք այնպիսի բառեր ու կապակցություններ, ինչպիսիք են, օրինակ, *լայն սպառման ապրանքներ, գնորդ, վաճառող, թեթև արդյունաբերություն, մեքենաշինություն, արտադրամաս, գարնանացան, ձկնաբուծություն, կաթնարտադրություն, վարելահող, գյուղգործիքներ, ճանապարհաշինարար, շինմոնտաժային աշխատանքներ, կառուցապատում, փայտավերամշակում, վառելիքաէներգետիկ պաշարներ, երկաթուղային բեռնափոխադրումներ, արտադրական հզորություն* և այլն: Այս շերտի բառերը, որքան էլ վերաբերեն տնտեսության առանձին ճյուղի կամ ոլորտի, ունեն համագործածական բնույթ և հիմնականում հասկանալի են լեզվակիրներին, որովհետև անվանում են կոնկրետ ու հանրաժանոթ իրողություններ:

¹ Այս կարգի բառերի տերմինային իմաստները տե՛ս ըստ Գ. Կիրակոսյանի, Հ. Ղուշյանի, Ի. Տիգրանյանի «Տնտեսագիտական բացատրական բառարանի»:

Իհարկե, տնտեսագիտությունը չի կարող մեկուսի դրսևորվել որևէ երկրում՝ առանց հաղորդակցվելու գիտության միջազգային զարգացումների հետ: Ավելին, տնտեսագիտության ուսումնասիրության առարկան չի կարող սահմանափակվել մեկ երկրի տնտեսական համակարգով. համաշխարհայնացման գործընթացները վաղուց վերացրել են անջրպետներն ու խոչընդոտները, և աշխարհի զարգացած տնտեսական համակարգերն ու տնտեսությունները իրենց բնական ու անհրաժեշտ ազդեցությունն են թողնում նոր զարգացող կամ թույլ զարգացած համակարգերի վրա: Այդ ամենը արտահայտվում է նաև տերմինաբանության մեջ: Հայ իրականության մեջ տնտեսագիտության միջազգային հասկացությունները իրենց բառային արտահայտությունը ստացել ու ստանում են կա՛մ պատճենմամբ, կա՛մ փոխառություններով, կա՛մ նոր բառերի կազմությամբ: Այլ լեզուներից կատարված պատճենումներ են, օրինակ, հետևյալները՝ *անտարբերության հավաքածու* (indifference set, набор безразличия), *համակցված ապահովագրություն* (combined insurance, комбинированное страхование), *առաձգականության գործակից* (elasticity coefficient, коэффициент эластичности), *զների հովանոց* (price umbrella, зонтик цен), *համաապահովագրություն* (co-insurance, сострахование) և այլն: Քիչ չեն նաև կիսապատճենումները (*բենեֆիսավար, ապաբոնդավորված բեռ, դելիկտաունակություն, ինտրաձեռնարկատիրություն, մակրոտնտեսական, միկրոմիջավայր, տեսատեքս, քվադրիփոդ* և այլն): Շատ մեծ քանակություն են կազմում տնտեսագիտության ոլորտի փոխառյալ բառերը: «Տնտեսագիտական բացատրական բառարանի» պատահաբար ընտրված 20 էջերում¹ մենք արձանագրել ենք շուրջ հինգ տասնյակ փոխառյալ բառեր (*կասկո, կարատ, կարտել, կարգո, կոալիցիա, կոմիսիոներ, կողիցի, կոմիտե, կոմյունիկե, կոմպրադոր, կոնգլոմերատ, կոնդիցիա, կոնկորդատ, կոնսիգնացիա, կոնսորցիում, կոնսյումերիզմ, կոնսիյնոր, կոնվերսիա* և այլն): Այդ նույն էջերում շուրջ վեց տասնյակ տերմիններ իրենց կազմում ունեն փոխառյալ բաղադրիչ կամ բաղադրիչներ (*ռիսկային կապիտալ, կառավարական տրանսֆերտային վճարումներ, կատարյալ մրցակցային ֆիրմա, կոլեկտիվ ձայն, կոմիսիոն վճար, տենդերային կոմիտե, կոնտինգենտավորում, կրոսսավորում* և այլն): Ինչևէ, համաշխարհային տնտեսության և տնտեսագիտության զարգացումները մեծ ծավալ ու թափ ունեն, և հաճախ դժվար է լինում թարգմանությամբ ժամանակին ու ճշգրիտ ձևավորել հայերեն համարժեք տերմիններ: Արդյունքում՝ տնտեսագիտական բառապաշարը համալրվում է նաև հայերենի հնչյունական օրենքներին հակասող կազմություններով, երբեմն հայերենի տեսանկյունից անբարեհունչ բառամիավորներով (*բրեյնստորմինգ, դելիկտ, դեզինտերմեդիացիա, դիսկաունտեր, դուոպսոնիա, էկաուտինգ, թայմոայթ, ռանտյե, սեքյուրիտիզացում, սկվիզ, սվիտչ, վորկֆեր,*

¹ Տե՛ս Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Ի., «Տնտեսագիտական բացատրական բառարան», էջ 200-220:

քլեյմս, ֆլուատ և այլն): Ընդ որում՝ սրանցից առանձին միավորներ կարող են լայն գործածականություն ձեռք բերել (*առողիտ, վաուչեր, ինֆլյացիա, կոուպե-րատիվ, դյուլմ* և այլն):

Որքան էլ մեծ է օտար տերմինները գործածելու գայթակղությունը, հայերենը հնարավորություն ունի իր բառակազմական միջոցներով ձևավորելու անհրաժեշտ գիտաբառեր, շարունակ հարստացնելու տնտեսագիտական տերմինաբանությունը: Նման կազմություններից են՝ *գանձապետարան, գործադուլ, գործակալ, գրավատուն, դրամագրկում, համատիրություն, համընդհանրացում, հայտարարագիր, ձեռնարկատեր, մաքսատուն, նախահաշիվ, շահաբաժին, շահույթ, փոխհատուցում, փորձագետ* և այլն: Այս խմբում ևս կարող են հանդիպել երկարաշունչ միավորներ, ինչպես՝ *բողոքապահանջ, գանձակուտակում, մենաշնորհագրկում, նմուշատեսականի, վնասապահանջ, ապապարբերաշրջանային* և այլն: Տեղին է հիշել Հովհ. Թումանյանի միտքը նման կազմությունների մասին. «Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզուն, քան ուղղակի փոխառությունը»¹:

Բոլոր դեպքերում, լեզվում ընթանում են բառապաշարի հարստացման բնական գործընթացներ՝ բնիկ ու օտար, գործածական ու պակաս գործածական միավորների միջև մրցակցությամբ ու ընտրությամբ: Այդ իրողությանն են վերաբերում նաև զուգահեռ կազմությունները (էլաստիկության գործակից – առաձգականության գործակից, էմիտենտ – արժեթղթեր թողարկող հաստատություն, ստագֆլյացիա – արտադրության ինֆլյացիոն անկում, սահմանափակ բաժնետոմսեր – ձայն չունեցող բաժնետոմսեր), ինչպես նաև ուղղագրական տարբերակները (բրոքեր – բրոկեր, հիփոթեք – հիպոթեկ, մարկեթինգ – մարքեթինգ, մոնիտորինգ – մոնիթորինգ, սվոպ – սվոփ, տրանսվեր – տրանսվերտ և այլն):

Պետք է արձանագրել, որ համաշխարհայնացման գործընթացները ավելի մեծ թափ են հաղորդել տնտեսական կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը, տնտեսագիտական մտքի զարգացումը առաջ է բերում բազմաթիվ նոր տերմինների ստեղծման, նորանոր փոխառությունների գործածության անհրաժեշտություն, բայց և «Օտար բառերի ու տերմինների թարգմանությունը, անհարկի օտարաբանությունների դեմ պայքարելը յուրաքանչյուր լեզվի բառակազմական ու տերմինաշինության ներքին օրինաչափություններից բխող կանոն է, լեզվի, որպես մտածողության ազգային ձևի, փիլիսոփայական դրույթից, լեզվի հասկանալիության անհրաժեշտությունից բխող կանոն»²: Փաստորեն, առկա է յուրատեսակ «պայքար» երկու իրողությունների միջև. մի կողմից՝ հայրենական տնտեսագիտությունը ձգտում է համաշխարհային գործընթացներին համաքայլ զարգանալ՝ զուգահեռաբար ջանալով արագ հաղթահարել լեզվական խնդիրները և հաճախ չխորշելով օտար բառերից ու

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1951, էջ 375:

² Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., «9-րդ հրաշալիք», 2006, էջ 17:

արտահայտություններից, մյուս կողմից՝ հայոց լեզուն, կատարելով անհրաժեշտ փոխառություններ, միաժամանակ ձգտում է թույլ չտալ օտար բառերի անկառավարելի ներհոսք՝ սեփական միջոցներով կերտելով նոր բառամիավորներ:

Տնտեսագիտության ոլորտի նորաբանությունների մասին

Եթե տնտեսության ու դրա մասին գիտության մեջ տեղի ունեցող տեղաշարժերն ու զարգացումները արձանագրվում են գիտական վերլուծություններում, վիճակագրական ցուցանիշներում, տարբեր կարգի հաշվարկներում ու տեղեկություններում, ապա այդ ոլորտներին վերաբերող բառապաշարի զարգացումները կարելի է տեսնել բառարաններում, հատկապես՝ նորաբանությունների բառարաններում: Հայ իրականության մեջ դեռևս չունենք տնտեսագիտության ոլորտի՝ վերջին տիպի բառարաններ, ուստի դիտարկումներ կարող ենք կատարել ընդհանուր բնույթի նորաբանությունների բառարաններում: Իհարկե, սրանցում տնտեսագիտության մասնագիտական տերմիններ ավելի քիչ են հանդիպում, որովհետև բառարանագիրները իրենց առջև նպատակ չեն դնում հանգամանորեն հետազոտել մասնագիտական գրականություն¹, սակայն զգալի քանակություն են կազմում տնտեսությանն առնչվող բառերը, որոնք կարող են վկայել այս կամ այն ուղղությամբ տեղի ունեցող զարգացումների մասին: Մյուս կողմից՝ նման նորաբանությունների ծագումնաբանական, բառակազմական յուրահատկությունները կարող են պատկերացում տալ տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին:

Եվ այսպես, նորաբանությունները արձանագրում են տնտեսության բեկումնային զարգացումներ ու նոր տիպի հարաբերություններ (*ազատականացնել, ամերիկաֆիկացում, աշխարհատնտեսություն, եվրապարտատոմս, եվրաշուկա, շուկայագետ, շուկայական հարաբերություններ, շուկայացում, շուկայավարում, սեփականաշնորհել* և այլն), մասնավոր կարգի տնտեսական գործընթացներ (*ապաստաճ, բաժնետիրացում, գերարժեգրվում, ենթավարկավորում, գնաճ, վարկօգտագործում, վաուչերացում*), տնտեսական գործունեության նոր տեսակների ու ոլորտների զարգացում (*բիզնես-պլան, ձեռնարկչատիրություն, կրիպտոարժույթ, կրիպտորոսա, հեռուստաարտադրանք, հեռուստաբորսա, հեռուստամագնատ, շոու-բիզնես, սեքս-բիզնես, տեսաբիզնես, արևաջերմակայան, հելիոհամակարգ, մեդիաշուկա, մեդիասպառող, ջայլամաբուծություն, շինշիլաբուծություն*), նոր իրողությունների, հաստատությունների ձևավորում (*ապրանքաբորսա, վարկագիծ, ավտոգազայցակայան, գծատեր, էկոգյուղ, հողմաէլեկտրակայան, համարտադրություն*) և այլն: Բառերը վկայում են նաև ավանդական ճյուղերում տեղի ունեցող գործընթացների մասին: Այսպես, առևտրի ոլորտի մեծ աշխուժությունն են

¹ Տե՛ս Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի», 2002, էջ 6-7:

փաստում բազմաթիվ նոր բառեր (*առևտրագնում, առևտրակարգ, առևտրաբանկ, առևտրագեղչ, առևտրամիջնորդ, առևտրապայման, վաճառացանց, վաճառագեղչ, վաճառաթուղթ, վաճառախայծ, վաճառահարկ, վաճառաճյուղ, վաճառանորույթ, վաճառավարձ, վաճառափեղկ*), բավականին բազմազան են ավտոմեքենաների հետ կապված գործունեության դրսևորումները (*ավտոբիզնես, ավտոգազալիցքավորում, ավտոընկերություն, ավտոգրանցում, ավտոկայանավայր, ավտոփոխառություն, ավտոմաքսագերծում, ավտոներկրող, ավտոներմուծող, ավտոշուկա, ավտոսերվիս, ավտոսպասարկում, ավտովարկ*), շատ կարևոր է վառելիքաէներգետիկ պաշարների դերը (*բենզաբիզնես, բենզալցակայան, գազարդյունահանում, գազամատակարար, էներգակիր, էներգապաշար, էներգառեսուրս, էներգահամակարգ, հողմէներգետիկա, նավթագազահոր, նավթարնկերություն, նավթալցարկում, նավթախողովակաշար, նավթամուղ, վառելիքաուժանյութային*) և այլն: Նորաբանությունները արձանագրում են նաև ժամանակավոր, կարճաժամկետ իրողություններ (*սեղանիկային առևտուր, սեղանիկավար, սեղանիկատեր, վաճառասեղանիկ*), մերժելի երևույթներ (*թմրասինդիկատ, թմրաբիզնես, թմրաթրաֆիք, թմրակարտել, թմրադիլեր, թմրաշրջանառություն, թմրավաճառ, նարկոբիզնես*) և այլն:

Տնտեսագիտության ոլորտի նորաբանությունների մեջ ևս շատ են փոխառությունները (*ավտոբիզնեսմեն, աուկցիոն, բարտեր, բիզնես-պլան, դեբետոր, ինժինիրինգ, մարժա, տրանշ, ֆիսկալ*), պատճենումներն ու կիսապատճենումները (*ապրանքադիրքորոշում, առևտրամիավոր, ապրանքաբորսային, էներգահամակարգ*), օտար բաղադրիչներով հայերեն կազմությունները (*աուդիտորական, ենթասակցիզային, լիզինգային, հակադեմպինգային, հեղջինգացում*): Սեփական միջոցներով նոր տերմինների ձևավորման դեպքում գործում են հայերենի ածանցման և բառաբարդման օրինաչափությունները (*անթափոն, ապաստաձ, գերարժեզրկում, հակամրցակցային, ապրանքանի, ստացույթ, արևաջերմակայան, հացարտադրություն, շահույթադրույթ, ուժանյութ, գծատեր, հաշվեգումար* և այլն):

Հետաքրքրական է, որ նորաբանությունների բառարաններում, ի տարբերություն տնտեսագիտական բառարանների, գերակշռում են մենաբառ տերմինները, նկատվում է միտում՝ բառակապակցությունները վերածելու համադրական բարդությունների, հաճախ էլ՝ հապավումների (*առևտրակարգ, ագրոկենսաբազմազանություն, ավիաբեռնափոխադրում, արտադրախմբաբանակ, ընդերքօգտագործում, հարկավճարում, սպասելավարձ, գյուղմթերք, ՀայՌուսգազարդ, ֆինվերահսկողություն, տուրարտադրանք*): Զգալի քանակություն են կազմում օտար ու հայերեն նույնիմաստ տերմինները (*ինվեստիցիա – ներդրում, կապիտալիզացիա – կապիտալիզացում – կապիտալականացում, ինֆրակառուցվածք – ենթակառուցվածք*), հայերեն զուգահեռ ձևերը (*հակամենաշնորհային – հակամենատիրական – հակամենաիշխանական, նավթախողովակաշար – նավթաշար, ջրաօգտագործող – ջրօգտա*

գործող, արտարժույթ – տարարժույթ – տարադրամ), առկա հայերեն ակնհայտ հաջողված ձևերի դիմաց նոր կազմությունները (վկայված *աճուր-դասրահ* բառի առկայությամբ¹ արձանագրվել են նաև *աճուրդանոց*, *աճուրդատուն* կազմությունները, *սակարան*-ի դիմաց՝ *սակարկարան*, *գովազդ*-ի դիմաց՝ *վաճառագովք*, *դյուրավաճառ*-ի դիմաց՝ *վաճառադյուր*, *թանկավաճառ*-ի դիմաց՝ *վաճառաթանկ*): Հանդիպում են նաև արևմտահայերեն կազմություններ (շվաքային տնտեսություն, քարյուղատար):

Ընդհանուր առմամբ՝ տնտեսագիտության տերմինաշինության ոլորտում նկատելի է որոշակի տարերայնություն: Հիշարժան է անցյալում Հայերենի բարձրագույն խորհրդի (ավելի վաղ՝ Տերմինաբանական կոմիտե) գործունեությունը, որը որոշումներ է ընդունել նաև տնտեսագիտական մի շարք հասկացությունների միօրինականացման և ճշգրտման մասին: Մասնավորապես՝ 1997 թ. գործածվող մի շարք ձևերի դիմաց Յու. Սուվարյանի առաջարկությամբ հաստատվել են նախընտրելի տարբերակներ (մուլտիպլիկատոր – *բազմարկիչ*. սուբսիդիա/սուբվենցիա – *լրահատկացում*, քվոտա – *բաժնեմաս*, *մասնորդ* և այլն)²: 2000 թ. ընդունված որոշմամբ՝ գործող մի շարք այլ ձևերի դիմաց նույնպես հաստատվել են նախընտրելի տարբերակներ (բիզնեսմեն/գործարար – *գործարար*. բորսա/բիրժա/սակարան – *սակարան*. դեֆիցիտ – *պակասություն* և այլն)³: Այս կարգի կարգավորումները, կարծում ենք, անհրաժեշտություն են գիտական տերմինաբանության զարգացման, հայոց լեզվի հարստացման, գիտության տարբեր ոլորտների անխաթար գործունեության համար:

Եզրակացություններ և առաջարկություններ

Տնտեսագիտական նոր տերմիններով հայերենի բառապաշարի համալրումը անհրաժեշտ է ինչպես նոր իրողությունները անվանելու, այնպես էլ գիտական վերլուծությունների, տնտեսության կառավարման և տնտեսավարության առումներով: Նորահայտ տերմինները վկայում են նաև տնտեսության մեջ տեղի ունեցող տեղաշարժերի, առանձին ճյուղերի ակտիվության մասին: Նոր տերմիններ հանդես են գալիս հայոց լեզվի բառաստեղծման ավանդույթների և եղանակների համաձայն, նաև փոխառությունների և պատճենման միջոցով: Դիտարկումները ցույց են տալիս, որ տնտեսագիտության ոլորտում տեղի է ունենում բառակապակցական միավորների դիմաց համադրական բարդությունների, ածանցավոր կազմությունների ստեղծում: Նկատելի է, որ փոխառյալ տնտեսագիտական տերմինները զգալի գործածականություն ունեն, մինչդեռ շատ դեպքերում դրանց դիմաց առաջարկվել են հայերեն կազմություններ: Ոլորտի տերմինագործածությունը աչքի է ընկնում որոշակի

¹ Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան», 1976, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1972:

² Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 2006, էջ 254:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 253:

տարերայնությամբ, հաշվի չեն առնվում տերմինաշինության համար կարևորություն ունեցող մի շարք պահանջներ (տերմինային համակարգում հոմանիշ ձևերի առկայությունը մերժելի է. տերմինը պետք է ճշգրիտ և հասկանալի ներկայացնի հասկացությունը. տերմինները պետք է լինեն ըստ հնարավորին կարճ, բարեհունչ, չխաթարեն լեզվի հնչյունական կազմությունը. փոխառյալ տերմինները ըստ անհրաժեշտության կարող են գործածվել, բայց ոչ հայերեն հաջողված կազմությունների փոխարեն կամ առանց հաշվի առնելու հայերենի արտասանական օրինաչափություններին անհամապատասխանությունը և այլն): Ճիշտ է, լեզուն ունի իր զարգացման ներքին օրենքներն ու օրինաչափությունները, հասարակական գործընթացները չեն կարող տեղաշարժեր առաջ բերել հնչյունական ու քերականական համակարգերում, սակայն գիտական միտքը պետք է օգնի լեզվին՝ կատարելու անհրաժեշտ ու բարեհունչ փոխառություններ, ստեղծելու հասկանալի, ճշգրիտ կազմություններ, ապահովելու գիտության տվյալ ճյուղի անկաշկանդ զարգացումը լեզվական միջոցներով: Այդ իմաստով՝ տնտեսագետների և լեզվաբանների համագործակցությունը տերմինաշինության բնագավառում անհրաժեշտ է: Տերմինային բազմազանությունից, սխալակազմություններից ու անհաջող գործածություններից խուսափելու համար հարկ է ունենալ յուրաքանչյուր ոլորտի տերմինաշինությամբ զբաղվող խորհուրդ, իսկ ընդհանրապես՝ գիտության ոլորտի բառագործածությունը կարգավորելու, հայերենի՝ իբրև գիտության լեզվի զարգացումը ապահովելու համար պետք է ձևավորել նման խորհուրդների աշխատանքները համակարգող կառույց:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան», հ. 1-2, 1976, 1640 էջ.
2. Ավդալբեկյան Թ., Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Ե., «Հայաստան», 1964, 586 էջ.
3. Ավետիսյան Ս., Թովմասյան Ռ., Տնտեսագիտության տեսություն, Ե., «Նահապետ», 2010, 324 էջ.
4. Բայադյան Ա., Տնտեսագիտական բառարան, Ե., «Գիտություն», 2014, 528 էջ.
5. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի», 2002, 492 էջ.
6. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1951, 527 էջ.
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., հ. 1-4, 1969-1980, 2762 էջ:
8. Խաչատրյան Գ., Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), Ե., հեղ. հրատ., 2007, 631 էջ.
9. Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան, Ե., «Տնտեսագետ», 1999, 494 էջ.

10. Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Ե., «Տիգրան Մեծ», 2006, 460 էջ.
11. Մելիքիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան (3000 բառ), Ե., «Փյունիկ», 1996, 208 էջ
12. Նոր բառեր, Ա պրակ, Ե., «Գիտություն», 2015, 196 էջ.
13. Նոր բառեր, Բ պրակ, Ե., «Ասողիկ», 2016, 184 էջ.
14. Նոր բառեր, Գ պրակ, Ե., «Ասողիկ», 2017, 143 էջ.
15. Նոր բառեր, Դ պրակ, Ե., «Ասողիկ», 2018, 132 էջ.
16. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, իմփ.՝ Լ.Միրզոյան, Ե., «9-րդ հրաշալիք», 2006, 384 էջ.
17. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), իմփ.՝ Գ. Կիրակոսյանի, Ի. Խլիլյանի, Ե., «Տնտեսագետ», 2009, 752 էջ.
18. Арутюнян III., Акопян Л., Факторы, влияющие на формирование современной экономической терминологии, Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով, Ե., «Տնտեսագետ», 2018, էջ 508-512.
19. Бернар и Колли, Толковый экономический и финансовый словарь (французская, русская, английская, немецкая, испанская терминология), т. 1, Москва, "Международные отношения", 1997, 784 с., т. 2, Москва, "Международные отношения", 1997, 784 с.
20. A. Zatikyan, Economics in English, Yerevan State University Press, 2007, 208 p.

References

1. Aghayan E', Ardi hayereni bacatrakan bar'aran, E., «Hayastan», h. 1-2, 1976, 1640 e'j.
2. Avdalbekyan T', R'us-hayeren tntesagitakan terminneri bar'aran, E., «Hayastan», 1964, 586 e'j.
3. Avetisyan S., T'ovmasyan R', Tntesagitut'yan tesut'yun, E., «Nahapet», 2010, 324 e'j.
4. Bayadyan A., Tntesagitakan bar'aran, E., «Gitut'yun», 2014, 528 e'j.
5. E'loyan S., Ardi hayereni norabanut'yunneri bar'aran, E., «Nairi», 2002, 492 e'j.
6. T'umanyan H., Erkeri jhoghovac'u, E., 1951, h.4, 527 e'j.
7. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran, HSSH GA hrat., E., h. 1-4, 1969-1980, 2762 e'j.
8. Xachatryan G., Tntesagitut'yan tesut'yun, Usumnakan d'er'nark, E., Hegh. Hrat., 2007, 631 e'j.
9. Kirakosyan G., Ghushchyan H., Tigranyan I., Tntesagitakan bacatrakan bar'aran, E., «Tntesaget», 1999, 494 e'j.
10. Markosyan A., Tntesagitut'yun bolori hamar, E., «Tigran Mec'», 2006, 460 e'j.
11. Meyt'ixanyan P', Nor bar'eri bacatrakan bar'aran, (3000 bar'), E., «P'yunik», 1996, 208 e'j.
12. Nor bar'er, A prak, E., «Gitut'yun», 2015, 196 e'j.
13. Nor bar'er, B prak, E., «Asoghik», 2016, 184 e'j.

14. Nor bar' er, G prak, E., «Asoghik», 2017, 143 e' j.
15. Nor bar' er, D prak, E., «Asoghik», 2018, 132 e' j.
16. Terminabanakan & ughghagrakan teghekatu, xmb.` L.Mirzoyan, E., «9-rd hrashaliq», 2006, 384 e' j.
17. Tntesagitut'yan tesut'yun (usumnakan d'er'nark), xmb.` G.Kirakosyani, I.Xlghat'yan, E., «Tntesaget», 2009, 752 e' j.
18. Arutjunjan Sh., Akopjan L., Faktory, vlijajushhie na formirovanie sovremennoj jekonomicheskoy terminologii, Tntesut'yan & hasarakut'yan zargacum. 21-rd dari martahraverner & hnaravorut'yunner, HPTH 27-rd gitajhoghov, E., «Tntesaget» 2018, e' j 508-512.
19. Bernar i Kolli, Tolkovyj jekonomicheskij i finansovyj slovar' (francuzskaja, russkaja, angliyskaja, nemeckaja, ispanskaja terminologija), t.1, Moskva, "Mezhdunarodnye otnoshenija", 1997, 784 s., t. 2, Moskva, "Mezhdunarodnye otnoshenija", 1997, 784 s.
20. A.Zatikyan, Economics in English, Yerevan State University Press, 2007, 208 p.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՎԼԱՐԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համառոտագիր: Տնտեսագիտության տերմինաբանությունը լայնածավալ է ու բազմաշերտ, շարունակ փոփոխվում է ու հարստանում: Առկա բառարանները թույլ են տալիս ընդհանուր գաղափար կազմել ոլորտի տերմինային համակարգի մասին, սակայն հայ իրականության մեջ չեն ստեղծվել տնտեսագիտական ոլորտի նորաբանությունների բառարաններ, չի կատարվել տերմինների լեզվաբանական հետազոտություն: Այս աշխատանքի նպատակն է դիտարկել տնտեսագիտությանը վերաբերող տերմինաբանության յուրահատկությունները, նորակազմ տերմինների քննությամբ երևան հանել ոլորտի զարգացման հիմնական միտումները, արձանագրել նորակազմությունների լեզվական առանձնահատկությունները: Մեր առջև խնդիր ենք դրել դիտարկել տերմինային համակարգի առկա շերտերը, վեր հանել նոր տերմինների ծագումնաբանական ու բառակազմական հատկանիշները, որոշել դրանց կապը տնտեսագիտության այս կամ այն ոլորտի հետ և այլն: Հետազոտության նյութը քաղել ենք տնտեսագիտական ու նորաբանությունների բառարաններից, զուգորդել ենք տնտեսագիտական ու լեզվաբանական վերլուծությունների ու նկարագրության մեթոդները: Տնտեսագիտության նոր տերմինները հանդես են գալիս հայոց լեզվի բառաստեղծման ավանդույթների և եղանակների համաձայն, նաև փոխառությունների և պատճենման միջոցով: Դիտարկումները ցույց են տալիս, որ տնտեսագիտության ոլորտում տեղի է ունենում բառակապակցական միավորների դիմաց համադրական բարդությունների, ածանցավոր կազմությունների ստեղ-

ծում: Փոխառյալ տնտեսագիտական տերմինները զգալի գործածականություն ունեն, մինչդեռ շատ դեպքերում դրանց դիմաց առաջարկվել են հայերեն կազմություններ: Տնտեսագիտական տերմինագործածությունը աչքի է ընկնում որոշակի տարերայնությամբ, հաշվի չեն առնվում տերմինաշինության համար կարևորություն ունեցող պահանջները (տերմինային համակարգում հոմանիշ ձևերի առկայությունը մերժելի է. տերմինը պետք է ճշգրիտ և հասկանալի ներկայացնի հասկացությունը. տերմինները պետք է լինեն ըստ հնարավորին կարճ, բարեհունչ, չխաթարեն լեզվի հնչյունական կազմությունը. փոխառյալ տերմինները ըստ անհրաժեշտության կարող են գործածվել, բայց ոչ հայերեն հաջողված կազմությունների փոխարեն կամ առանց հաշվի առնելու հայերենի արտասանական օրինաչափություններին անհամապատասխանությունը և այլն): Տնտեսագետների և լեզվաբանների համագործակցությունը տերմինաշինության բնագավառում թվում է նպատակահարմար. այն թույլ կտա փոխառություններ կատարելիս հանդես բերել անհրաժեշտ զսպվածություն, ստեղծել հասկանալի, ճշգրիտ կազմություններ, ապահովել տնտեսագիտության զարգացումը նաև լեզվական միջոցներով:

Բանալի բառեր՝ տնտեսագիտություն, տերմինաբանություն, նորաբանություն, փոխառյալ բառ, բառարան, հայերեն, լեզվաբանություն, պատճենում

О ТЕНДЕНЦИЯХ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ТЕРМИНОЛОГИИ

**ВИКТОР КАТВАЛЯН
ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Аннотация: Терминология экономики обширна и многослойна, она постоянно меняется и обогащается. Существующие словари позволяют составить общее представление о терминологической системе данной области, но в армянской действительности не создавались словари экономических неологизмов, не проводилось лингвистическое исследование терминов. Целью данной работы является наблюдение за особенностями терминологии, относящейся к экономике, изучение основных тенденций в развитии данной области, фиксация языковых особенностей новообразований. Мы поставили перед собой задачу проследить существующие пласты терминологической системы, выявить генеалогические и лексические особенности новых терминов, определить их связь с той или иной областью экономики и т. д. Материал для исследования мы взяли из словарей экономики и неологизмов, сочетали методы экономического и лингвистического анализа и описания. Новые экономические термины формируются способами словообразования армянского языка, они также начинают использоваться через заимствование и копирование. Наблюдения показывают, что в области экономики происходит формирование сложных и производных слов взамен словосочетаний. Широко используются заимствованные экономические термины, хотя во многих случаях вместо них предлагались армянские образования. Экономическая терминология отличается определенной спонтанностью, существенные требования к терминологии не учитываются (недопустимо наличие синонимов в терминалогии; термин должен точно и ясно представ-

лять понятие; термины должны быть как можно короткими и лаконичными и не должны нарушать фонетическую структуру языка; заимствованные термины могут использоваться по мере необходимости, но не взамен удачных армянских образований или без учета несоответствия закономерностям произношения армянского языка и т.д.). Сотрудничество экономистов и лингвистов в области терминологии представляется целесообразным. Оно позволит проявить необходимую сдержанность при заимствовании терминов, создавать понятные, точные построения, обеспечить развитие экономики также с помощью лингвистических средств.

Ключевые слова: экономика, терминология, неологизм, заимствованное слово, словарь, армянский язык, языкознание, копия

ABOUT DEVELOPMENT TRENDS OF ECONOMIC TERMINOLOGY

VICTOR KATVALYAN
VLADIMIR HARUTYUNYAN

Abstract: The terminology of economics is vast and multi-layered; it is constantly changing and enriching. The existing dictionaries make it possible to form a general idea on the terminological system of this area, but in the Armenian reality no dictionaries of economic neologisms have been created, no linguistic research of terms has been carried out. The purpose of this work is to observe the peculiarities of terminology related to economics, to reveal the main trends in the development of this area through examining the new terms, to fix the linguistic features of new formations. We set ourselves the task of tracing the existing layers of the terminological system, identifying the genealogical and lexical features of new terms, determining their relationship with a particular area of economics, etc.. We took the material for research from dictionaries of economics and neologisms, combined methods of economic and linguistic analysis and description. New economic terms are formed by the methods of word formation in the Armenian language; they also begin to be used through borrowing and copying.

Observations show that in the field of economics, complex and derivative words are formed instead of phrases. Borrowed economic terms are widely used, although in many cases Armenian formations were proposed instead. Economic terminology is characterized by a certain spontaneity, essential requirements for terminology are not taken into account (the presence of synonyms in the terminology is unacceptable; the term must accurately and clearly represent the concept; terms should be as short and concise as possible and should not violate the phonetic structure of the language; borrowed terms can be used as needed, but not instead of successful Armenian formations or without taking into account the inconsistency with the pronunciation of the Armenian language, etc.). The cooperation of economists and linguists in the field of terminology seems appropriate. It will allow showing the necessary restraint when borrowing terms, create clear, accurate constructions, and ensure the development of the economy also with the help of linguistic means.

Keywords: Economics, terminology, neologism, borrowed word, dictionary, Armenian language, linguistics, copy